10.56653/18290361-2025.15-169

Սուսաննա Հարությունյան
Նոր պատմության բաժնի ղեկավար
Երևան քաղաքի պատմության թանգարան
harutyunyansussana@gmail.com

1724 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հիմնաբառեր. Երևան, Կարբի, արշավանք, Ձորագյուղ, պաշտպանություն, թանգարան, մանրակերտ:

Ներածություն

18-րդ դարի քաղաքական իրադարձությունները Անդրկովկասը կրկին դարձրին պատերազմի թատերաբեմ: Դարասկզբին սկսված ներքին խռովությունները, ինչպես նաև աֆղանների հուժկու ապստամբությունը թուլացրին և մասնատեցին Սեֆյան Պարսկաստանը: Այդ իրադարձություններն անշուշտ անտարբեր չէին թողնելու Թուրքիային, որի վաղեմի նպատակը Արևելյան Հայաստանը և Երևանը գրավելն էր: Բարձր դուռը հատկապես անհանգստացած էր տարածաշրջանում Ռուսաստանի ներկայության և Կասպից ծովի արևմտյան ափին ամրանալու հաջող մեկնարկով: Իր հերթին Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում հայ և վրաց ժողովուրդների մոտ անկախության նվաճման հույսեր էր արթնացրել: Ձևավորվել էր քաղաքական ծրագիր, որի կենսագործման միջոցով Ռուսաստանի հովանավորության ներքո ստեղծվելու էր հայ-վրացական միացյալ քրիստոնեական թագավորություն, որի գլուխ կանգնելու էր Քարթլիի թագավոր Վախթանգ 6-րդը: Վերջինս այդ նպատակի համար գրավելու էր Երևանը (Հայոց պատմություն 2010, 39): Սակայն հետագա իրադարձությունները դժվարացրին ռուսների առաջխաղացումը Անդրկովկասում և ընդհակառակը՝ նպաստեցին թուրքերի հաջողություններին: Արշավանքը Երևանի վրա սկսվեց 1724 թ. ամռանը: Երևանցիները շուրջ 90 օր ծանր կորուստների գնով կարողացան հետ մղել թշնամու գրոհները:

Երևան քաղաքի պատմության թանգարանն առանց բնօրինակ ցուցանմուշների, ունենալով միայն պատմական ճշգրիտ տեղեկություններ և օգտագործելով թանգարագիտության ընձեռած հնարավորությունները, կարողացավ հիմնական ցուցադրության մեջ պատշաճ մակարդակով ներկայացնել քաղաքի 1724 թ. հերոսական պաշտպանությունը:

1724 թ. հունիսին թուրքական 30–35 հազարանոց զորքով սերասկյար Արիֆի Ահմադ փաշան Գյումրիով և Ապարանով մտնում է Արարատյան դաշտ: Թուրքե-

* Ստացվել է 11.02.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 13.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

րին համառ դիմադրություն է ցույց տալիս Կարբի գյուղը, որը ըստ Լեոյի «արժանի էր գյուղաքաղաք կոչվելու» (Լեո 1973, 151), միաժամանակ բանակցում Երևանի Միհրալի խանի հետ՝ օգնության ակնկալիքով: Սակայն վերջինս միայն սին խոստումներ էր տալիս: Իրավացի է Լեոն՝ գտնելով, որ «զարմանալին այստեղ Միհրալի խանի վարմունքը չէ, հիարկե, այլ զինվորվելու այն տրամադրությունը, որ կար հայերի մեջ» (Լեո 1973, 152): Տանուտեր Մարտիրոսի գլխավորությամբ կարբեցիները շուրջ 40 օր դիմադրում են թուրքերին և համաձայնում պայքարը դադարեցնել միայն այն ժամանակ, երբ վերջիններս խոստանում են բնակչության նկատմամբ հաշվեհարդար չտեսնել:

Երևանի պաշարումը սկսվում է հունիսի 7-ին: Միհրալի խանը, Եղվարդի մոտ թուրքերից պարտություն կրելով, փակվել էր բերդում՝ պարսիկ մեծամեծների հետ տանելով նաև քաղաքի 12 հայտնի հայ իշխանների: «Իշխանն Երևանայ, — գրում է Աբրահամ Երևանցին, — առեալ էր ի ներքո յամրոցն Երևանայ ի մեծամեծացն Հայոց զերկոտասան անձինս ամենայն տամբ նոցա, որոց գլխավորք էին մէլիք Սահակն, մէլիք Աղամալի որդին և եղբայր նորա Աղայ-Վէլին, պարոն Կարապետն, Միքայէլ Բարխուդարյան և Բաբաջանն Մոծակեան և այլք ընդ սոսա» (Աբրահամ Երևանցի 1938, 16): Երևանի պաշտպանությունն իրենց ձեռքն են վերցնում հայերը: Մեծ զոհեր և բազում անհարմարություններ պատճառելով թուրքերին նրանք հետ էին մղում անհավասար գրոհներն իրենց հարազատ քաղաքի վրա: Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպան Նեպլյունն իր կառավարությանը հաղորդում էր, որ թուրքերն ամեն օր Երևան են ուղարկում իրենց ներկայացուցիչներին՝ առաջարկելով հանձնել քաղաքը, բայց երևանցիները մերժում են՝ ասելով, որ իրենք չեն վստահում թուրքերին և գերադասում են կռվել ու մեռնել, որն ավելի պատվաբեր է, քան գերի ընկնել (Հայոց պատմություն 2010, 41): Այս նույն շրջանում Ռուսաստանն իր գրաված տարածքները ապահովելու նպատակով պայմանագիր է կնքում Օսմանյան կայսրության հետ: 1724 թ. հունիսի 12-ին կնքված պայմանագրով Ռուսաստանն ու Թուրքիան Անդրկովկասի և Ատրպատականի պարսկական տիրույթները բաժանում են իրենց մեջ: Կասպից ծովի արևմտյան ափը՝ Դերբենդից Մազանդարան տարածքը, մնում է Ռուսաստանին, իսկ Վրաստանը, Արևելյան Հայաստանը ամբողջությամբ ճանաչվում են իբրև Օսմանյան կայսրության ենթակա երկրներ: Թուրքական հրամանատարությունն այդ երկրների բնակչությունից պահանջում է զենքը վայր դնել: Սակայն նշված վայրերի բնակիչները, որոնց մեջ էին նաև Արցախի և Սյունիքի հայկական իշխանությունները, ինչպես նաև Երևանի պաշտպանները, ոչ միայն չենթարկվեցին այդ հրամանին, այլև համառ ու տևական դիմադրություն ցույց տվեցին: Երևանի պաշտպաններին՝ Հին թաղի բնակիչներին, միացել էին Ձորագյուղի, Կոնդի, ինչպես նաև Փարաքարի, Կավակերտի, Առինջի, Ավանի, Նորագյուղի և շրջակա մյուս գյուղերի բնակիչները: Պաշարված Երևանը շուրջ 90 օր դիմադրեց թշնամուն՝ խլելով մեծ զոհեր ու միջոցներ: Ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանի պաշտպանների ուժերը խիստ փոքրաթիվ էին՝ ընդամենը 9443 հայ զինվոր: «Եվ սոքա էին միայն Հայք, — տեղեկացնում է մեզ Երևանցին, — քանզի պարսիկքն ընդ իշխանի քաղաքին փախուցեալ ի բերդն ամրացան և զհայսն թողին յանպարիսպ քաղաքի անդ մարտնչիլ»

(Աբրահամ Երևանցի 1938, 15)։ Նա նաև տեղեկացնում է, որ քաղաքի պաշտպանների «գլխավորքն» էին Հովհաննես Հունդիբեկյանը, Պողոս Քիչիբեկյանը, Դավիթ Միրզեջանյանը և Կառչիկ Հովհաննեսը։ Զորագյուղի սուրբ Սարգիս եկեղեցու Գրիգոր վարդապետի առաջնորդությամբ նրանք գիշերները խորհրդի էին հավաքվում։ Աբրահամ Երևանցին առանձին հիացմունքով է խոսում նաև Կոնդում ապրող բոշաների ներգրավվածության մասին. «...ի քաղաքի անդ ի տեղին, որ Կոնդի թաղ անուանիւր, էին քրիստոնեայք փոշայք, (100) տուն, մեծատունք ու քաջասիրտք, վարժք զինու պատերազմի» (Աբրահամ Երևանցի 1938, 16)։ Նրանք իրենց առաջնորդների՝ Ղազարոսի, Պետրոսի, Դավթի և Բեյրամի գլխավորությամբ, հատկապես աչքի են ընկնում 1724թ. օգոստոսի հակահարձակման ժամանակ, երբ թուրքերին օգնության եկած 3000 եգիպտացի զինվորները և նրանց հետ նաև ուրիշներ, հանկարծակի կտրուկ հարձակումով անակնկալի են բերում Զորագյուղի պաշտպաններին։ Թուրքերը միայն այս հարձակման ժամանակ կորցնում են 6000 զինվոր։ Մինչ այս պահը Երևանը պաշարած թուրքական զորքին էին միացել 35 000 քրդական և 10 000 Քյոթահիայի զորաբանակները, որոնց օգնությամբ անգամ, Ահմադ փաշան չկարողացավ գրավել քաղաքը։ Թուրքերին հաջողվում է Երևանը գրավել ավելի մեծ համալրում ստանալուց հետո միայն։ Ուժերը խիստ անհավասար են դառնում, երբ նրանց է միանում Սարը Մուստաֆայի և Ռեջաբ Փաշայի 38 հազարանոց զորքը։ Իսկ քաղաքի պաշտպանների ոչ միայն ուժերն էին անհավասար, այլև սպառվել էին պարենամթերքն ու զինամթերքը։ Հույսը կորցրած պաշտպանները փորձեցին բանակցություններ սկսել, սակայն թուրքերը սպանեցին բանագնացներին և մեծաքանակ ուժերով ներխուժեցին քաղաք։ Նրանք դաժան հաշվեհարդար տեսան պաշտպանների հետ։ Սեպտեմբերի 22–23-ին անձնատուր եղավ Երևանի բերդը։ Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու միջնորդությամբ Միհրալի խանն իր ունեցվածքով հանգիստ հեռացավ քաղաքից։

Ընդհանրապես, 1724թ. Երևանի հերոսական պաշտպանությունը թեև մի փոքր դրվագ է մեր ժողովրդի պատմության մեջ, սակայն իր մեծ նշանակությունն է ունեցել, ինչպես երկրի, այնպես էլ մասնավորապես Երևան քաղաքի համար՝ կասեցնելով թուրքական բանակների առաջխաղացումը և հնարավորություն տալով Սյունիքի և Արցախի հայկական իշխանություններին դիմագրավելու թուրքերի արշավանքին։ Լեոյի կարծիքով Արցախի և Սյունիքի պայքարը «հմայք էր ստեղծել շրջակա հայության մեջ, ուստի և բնական էր, որ Երևանի շրջանի հայությունն էլ ոտքի կանգներ արշավող ընդհանուր թշնամու դեմ» (Լեո 1973, 152)։

Սակայն այս ամենի մեջ պետք է առանձնացնենք այն նշանակությունը, որը վերաբերում է քաղաքին և նրա բնակիչներին։ Երևանցիներն առաջին անգամ էին իրենց վրա վերցնում իրենց քաղաքի պաշտպանության գործը, «զինվորվել» ու համախմբվել էին՝ գիտակցելով քաղաքացու իրենց պարտականությունը։

Ահա այսպես, մի քիչ ավել կամ մի քիչ պակաս, հաշվի առնելով այցելուի տարիքը, տեղեկացվածությունը, Երևան քաղաքի պատմության թանգարանում, էքսկուրսիայի ժամանակ ներկայացվում է 1724թ. հերոսական պաշտպանության թեման։ Քանի որ թանգարանը ներկայացնում է քաղաքի պատմությունը, ուստի մշա-

կույթի հետ միասին մեծ կարևորություն է ստանում նաև նրա պատմության լուսաբանումը: Սակայն, հայտնի է, որ թանգարաններում այցելուներին ավելի շատ գրավում են բնօրինակ ցուցանմուշները: Իսկ ինչպես վարվել այս դեպքում, երբ մեզ հետաքրքրող թեման շուրջ 300-ամյա վաղեմություն ունի և ոչ մի բնօրինակ ցուցանմուշ բնականաբար չի պահպանվել[1]: Այստեղ օգնության են հասնում թանգարանագիտության բնագավառի ընձեռած հնարավորությունները: Մերօրյա թանգարանների առջև դրված են բազմաթիվ խնդիրներ, և դրանց համապատասխան պետք է կիրառվեն բազմազան գործառույթներ: Թանգարանագիտության մեջ առանձնացվում են հիմնականում չորսը՝ փաստագրում, պահպանություն, հետազոտում և կրթադաստիարակչական գործառույթներ: Ինչ վերաբերում է խնդիրներին, ապա ըստ չեխ գիտնական Բենեշի՝ թանգարանի հիմնական խնդիրը հասարակության զարգացմանը նպաստելն է, հատկապես կրթության ասպարեզում (Բարսեղյան 2010, 14): Այս գործառույթն իրականացվում է թանգարանային առարկայի տեղեկատվական հնարավորությունների օգտագործմամբ: Իր տեղը գտնելով գիտական ցուցադրության մեջ՝ թանգարանային առարկան որոշակի բովանդակությամբ փոխակերպվում է գիտելիքի աղբյուրի: Ըստ այդմ, որոշակի թեմայի բացահայտման համար կարող են հաջողությամբ օգտագործվել ինչպես բնօրինակ առարկաներ, այնպես էլ գիտաօժանդակ նյութեր, գիտական հիմքով վերականգնումներ՝ մանրակերտ, պատճենահանված նյութեր, կրկնօրինակներ, աղյուսակներ, քարտեզներ և այլն: Ժամանակակից թանգարաններում ցուցադրության մեջ հաջողությամբ կիրառվում է նաև իլյուստրատիվ՝ նկարազարդային մեթոդը, որում լայնորեն օգտագործվում է համագործակցությունը նկարիչ-ձևավորողների հետ: 1724 թ. Երևանի հերոսական պաշտպանության թեման թանգարանի մշտական ցուցադրության մեջ հնարավոր եղավ իրականացնել հատկապես վերոհիշյալ մեթոդի շնորհիվ՝ համագործակցելով նկարիչ-ձևավորողների մասնագիտական խմբի հետ: 2007 թ.՝ թանգարանի մշտական ցուցադրության բացումից հետո, թանգարանի տնօրենի նախաձեռնությամբ նկարիչ-ձևավորող, Նկարիչների միության անդամ Ալբերտ Սոխիկյանը ձեռնամուխ եղավ երկու ցուցասրահների կենտրոնական հատվածների շրջանաձև կտրվածքների ողորկ պատերի ձևավորման աշխատանքներին: Ցուցասրահներից մեկի շրջագոտին պետք է ներկայացներ Երևանի տոներն ու հավատալիքները, իսկ մյուսը՝ 1724 թ. պաշտպանությունը: Թանգարանի տնօրենը հիշում է, որ այդ տարիներին հանրապետությունում թանգարանային դիզայնի փորձառու մասնագետներ գրեթե չկային, ինքը՝ Ալբերտ Սոխիկյանը նույնպես, թանգարանային դիզայնի մեծ փորձ չուներ[2]: Օգնության եկան թանգարանի բազմամյա աշխատակիցները: Վերջիններիս և տնօրենի ակտիվ աշխատանքի արդյունքում ստեղծվեց ձևավորման հայեցակարգը: Շրջագոտու վրա «ծնունդ առան» ինչ որ տեղ մտացածին դիմանկարներ (համապատաս-

---

[1] Մինչ այդ ցուցադրության մեջ տեղադրվել էր Երևանի բերդի գրավման թեմային նվիրված մանրակերտ, սակայն վերջինիս հետ միասին թանգարանն ուներ նաև բնօրինակ ցուցանմուշներ:

[2] Թանգարանի նախկին տնօրեն Արմինե Սարգսյանի հետ հարցազրույցից, Երևան, 2024 թ. (Ս Հ):

խանեցնելով պաշտպանության ղեկավարների կերպարների հետ), որոնցից յուրաքանչյուրը կարող էր լինել Հովհաննես Հունդիբեկյանը, Դավիթ Միրզեջանյանը, Պողոս Քիչիբեկյանը կամ Կառչիկ Հովհաննեսը: Նրանց հետ միասին կտավի վրա պատկերվում է սուրբ Սարգիս եկեղեցին, իսկ գավթում՝ Գրիգոր վարդապետի կերպարը մարմնավորող վանականը՝ շրջապատված քաղաքացիներով: Այնուհետև կտավն իր տեղը գտավ շրջանաձև կտրվածքի պատերին: Այս կերպարներն արդեն իսկ բավարար էին թեման ներկայացնելու համար: Սակայն այն ավելի ամբողջական ստացվեց և էքսկուրսիան ավելի շահեց, երբ պատրաստվեց հին Երևանի մանրակերտը և տեղադրվեց անմիջապես շրջագոտու տակ՝ առաջին հարկում[3]: Այն ներկայացնում է հին Երևանի թաղերը՝ բուն քաղաքը կամ Հին թաղը, Կոնդը՝ Հրազդան գետով, Ձորագյուղը՝ շրջապատված այգիներով և Երկաթաղբյուրը: Մանրակերտը կարծես նոր շունչ հաղորդեց Երևանի հերոսական պաշտպանության թեմային՝ դարձնելով ավելի կենդանի ու արդիական, քանի որ բոլոր այն տեղավայրերը, որոնց մասին խոսք էր գնում էքսկուրսիոն տեքստում՝ կարելի էր տեսնել մանրակերտի վրա: Այս ամենը թեման ավելի գրավիչ ու հետաքրքիր դարձրեց այցելուների համար: Մանրակերտի շնորհիվ այցելուն միաժամանակ տեղեկացվում էր նաև հին Երևանից, նրա թաղերից, տեղանուններից, հին երևանցիների զբաղմունքից, քաղաքի իրադարձություններից: Թեման մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև ուսուցիչների շրջանում: Նրանց առաջարկությամբ թանգարանում կազմակերպվեցին նաև թեմատիկ էքսկուրսիաներ՝ նվիրված Երևանի հերոսական պաշտպանությանը: Ճիշտ է, կրթալուսավորչական որևէ գործունեություն, որն իրականացվում է թանգարանում, խիստ արտահայտված ուսումնական գործընթաց չէ: Դրանք փոխանցման անկաշկանդ, ազատ, խաղային ոճով իրականացվող տեղեկատվական միջոցառումներ են, որոնց նպատակն առաջին հերթին թանգարան այցելելու մշակույթ ձևավորելն է: Սակայն իրենց խորքում այդ միջոցառումներն ունեն նաև որոշակի գիտելիքներ հաղորդելու նպատակ: 1724 թ. Երևանի պաշտպանությանը նվիրված թեմատիկ էքսկուրսիայի ընթացքում աշակերտները կամ ուսանողները հնարավորություն ունեն ավելի լավ ընկալելու իրադարձությունները, ինչպիսին՝ օրինակ, թուրքական մեծաքանակ զորքի դեմ Երևանի փոքրաքանակ պաշտպանների հաջողություններն են: Այդ առաջին հայացքից անհնարին թվացող գործողությունները բացատրվում են երևանցիների իրենց միջավայրի, կլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի օգտագործման հմտություններով, ինչպես նաև անձնական քաջությամբ: Լեոն, կարևորելով նշված պայմանները, գրում է. «Հայ նորակազմ զինվորությունը պաշտպանեց անպարիսպ քաղաքը լոկ օգտագործելով տեղագրական պայմանները՝ Ձանգուի խոր ձորը, այգիների ու ծառատունկերի խտությունը գետի ու քաղաքի միջև, որ դժվարացնում էր պաշարողների հարձակումը: Մնացածը կատարում էր դիմադրողների անձնուրաց քաջությունը» (Լեո 1973, 153): Կամ, խոսելով

[3] Մանրակերտը պատրաստել է Պետրոս Գրիգորյանը քաղաքի տեխնիկ Բորիս Մեհրաբյանի Երևանի 1906–1911 թթ. հատակագծի հիման վրա, որը նույնպես պահվում է թանգարանում:

Զորագյուղի սուրբ Սարգիս եկեղեցու մասին, էքսկուրսավարը տեղեկացնում է, որ հին Երևանում, մինչև 1679թ. ավերիչ երկրաշարժը, այս տարածքում եղել է 3 եկեղեցի՝ Սուրբ Սարգիս, Սուրբ Գևորգ և Սուրբ Հակոբ, որոնք հիմնահատակ քանդվել են: Երկրաշարժից հետո վերականգնվել է միայն Սուրբ Սարգիսը: Օգտվելով առիթից՝ էքսկուրսավարը որոշ տեղեկություններ է հաղորդում նաև այդ դեպքերի մասին: Երբ այցելուները մանրակերտի վրա տեսնում են Հրազդան գետը, որի ձախ ափին, վերևում՝ բարձունքի վրա, փռված էր հին քաղաքն իր թաղերով, Զորագյուղն իր այգիներով, որոնք անանցանելի էին թուրքական զորքի համար, նրանց համար միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչպես են տեղանքի առավելությունն օգտագործել քաղաքի պաշտպանները: Մանրակերտի վրա այցելուն տեսնում է նաև Երևանի բերդը, որտեղ, ինչպես տեղեկացնում է Աբրահամ Երևանցին, պարսիկ մեծամեծներով և 12 հայ մելիքներով փակվել էր Միհրալի խանը, բերդի ստորոտում գտնվող Երևանի հին կամուրջը, որը կարմիր քարից պատրաստված լինելու համար այդպես էլ կոչվում է՝ Կարմիր կամուրջ: Այս դրվագում խոսելով հայ մեծամեծների մասին, առանձնացվում են երկուսը՝ Մելիք-Աղամալյան եղբայրներ Սահակը և Աղա Վելը: Էքսկուրսավարը տալիս է որոշ տեղեկություն այն մասին, որ այդ տոհմից էին դառնում հայկական թաղերից մեկի՝ Կոնդի ավագներ, իսկ հետագայում՝ քաղաքագլուխներ (ցույց է տալիս սրահում ցուցադրվող կովկասցի տղամարդու տոնական հագուստը, որը պատկանել է 19-րդ դարի գործիչ Սահակ Մելիք Աղամալյանի ընտանիքին, մի փոքր, չշեղվելով բուն նյութից, տալիս է նաև հագուստի պատմությունը): Լսելով բացատրությունն այն մասին, որ պարսիկները բերդից թնդանոթային կրակի տակ էին պահում Կարմիր կամուրջը, այցելուն, կրկին մանրակերտի օգնությամբ, տեսնելով տեղանքը, հասկանում է, թե ինչու էին թուրքերը խուսափում քաղաք ներխուժել այս ճանապարհով և ընտրել էին Զորագյուղի այգիների ու Հրազդան գետի առավել ծանծաղոտ հատվածը: Ինչպես տեսնում ենք, մանրակերտը էքսկուրսավարի խոսքը դարձնում է ավելի գրավիչ ու հետաքրքիր, իսկ նյութն՝ ավելի ընկալելի: Թեման հնարավորություն է տալիս նաև որոշ տեղեկություններ հաղորդել երևանցիների զբաղմունքի մասին: Նշելով քաղաքի պաշտպանական բնագծերը՝ էքսկուրսավարը տեղեկացնում է, որ կոնդեցիները պաշտպանում էին «Խաղախորդաց», բոշաները՝ «Քառասուն ջաղացի», իսկ ձորագյուղցիները՝ «Ծակ քար» կոչվող վայրերը՝ միաժամանակ բացատրելով, որ օրինակ՝ խաղախորդը, կաշեգործ է նշանակում և, որ Հրազդանի ձորում էին գտնվում կոնդեցիների և նորքեցիների կաշեգործական արհեստանոցները, ինչպես նաև քաղաքի ջրաղացները: Քանի որ թեման նաև շատ արդիական է, խաչաձև հարցերով համեմատություն է կատարվում մեր օրերի իրադարձությունների հետ՝ պարզելու այցելուի կարծիքը երկրի պաշտպանության խնդիրների, հաղթանակների ու պարտությունների մասին՝ հատկապես այն պարտությունների, որոնք այնուամենայնիվ հերոսական ու անհավասար պայքարի ավարտ են՝ ինչպիսին 1724թ. պաշտպանությունն է և էլի շատ դրվագներ մերօրյա պատմությունից: Թեմատիկ էքսկուրսիան անդրադառնում է նաև այս խնդրին՝ փորձելով այցելուներին, հատկապես աշակերտներին և ուսանողներին տրամադրել խելացի, կառուցողական բանավեճի (դիսկուրսի):

Եզրակացություն

Ամփոփելով հոդվածը, մեկ անգամ ևս նշենք, որ Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը քաղաքի պատմության թանգարանի մշտական ցուցադրության մեջ տեղ գտած առանցքային թեմաներից է, որին նվիրված թեմատիկ կամ ավանդական էքսկուրսիայի միջոցով մեր հանրությանը և օտար այցելուներին ներկայացվում է նրա պատմական նշանակությունը՝ ընդգծելով այն մեծ դերը, որ ունեցել է երևանցու՝ որպես քաղաքացու, կերպարի ձևավորման գործում: Պետք է նկատել, որ ժամանակակից շենքում նրա ոչ այնքան մեծ և յուրօրինակ մակերեսը որոշակի դժվարություն էր ստեղծում Երևանի նման հնամենի քաղաքի ողջ պատմությունը հանրահռչակելու տեսակետից: Այնուամենայնիվ՝ ունենալով բավականաչափ գիտաժանդակ նյութ և օգտագործելով թանգարագիտության ընձեռած հնարավորությունները, ժամանակակից թանգարաններում լայնորեն կիրառվող իլյուստրատիվ՝ նկարազարդային, մեթոդի միջոցով 1724թ. Երևանի հերոսական պաշտպանության թեմայի ցուցադրությունը իրականություն դարձավ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑԻ 1938 – Աբրահամ Երևանցի, *«Պատմություն պատերազմացն 1721–1736թթ.»*, Երևան, ԱրմՖԱՆ (այժմ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա), 1938:

ԲԱՐՍԵՂՅԱՆ 2010 – Բարսեղյան Լ., *Թանգարանային հիմունքներ (մեթոդական ձեռնարկ)*, Երևան, 2010:

ԼԵՈ 1973 – Լեո, *Երկերի ժողովածու*, Երևան, Հայաստան հրատարակչություն, հ. 3, 1973:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 2010 – *Հայոց պատմություն*, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատարակչություն, , հ. 3, 2010:

Susanna Harutyunyan

Head of Modern History Department

Yerevan History Museum

harutyunyansussana@gmail.com

1724 YEREVAN HEROIC DEFENCE THEME IN THE EXHIBITION OF YEREVAN HISTORY MUSEUM

Keywords: Yerevan, Karbi, invasion, Dzoragyugh, defense, museum, miniature

1724 Yerevan's defense is one of the most difficult times of our nation's history when it was necessary to rely on one's own few forces and opportunities. That fatal struggle grants us the right of calling it heroic, which was created by the people of Yerevan for the first time, facing an enemy ten times stronger than they.

This episode of history has found its rightful place in the exhibition of the Yerevan History Museum. As this museum is devoted to Yerevan's history, together with its culture, the illustrations of the city's history are of great importance. Though, it is known that original exhibits in museums attract visitors more. And how to act in the case when the topic we are interested in is around 300 years old, and no original exhibits have been preserved. Museology provides an opportunity to use original objects, as well as other additional scientific materials to explore a specific theme. In modern museums, the method of illustration, in which cooperation with artist-designers is widely used, is successfully applied

in exhibitions. The theme of the 1724 Yerevan heroic defense was possible to actualize, especially due to the method of illustration, cooperating with a professional group of artist-designers, led by Albert Sokhikyan. Fictional portraits were born on the tape, each of which could be one of the heroic defense leaders. These characters were enough to introduce the theme. But it was fully complete and the excursion benefited from it when the miniature of old Yerevan was made and placed directly under the tape, turning the 1724 heroic defense one of the key themes of the exhibition. Through excursions devoted to it, the visitors are presented with its historical significance, emphasizing the huge role, that it had in the formation of the citizen image of Yerevan residents.

Сусанна Арутюнян
Руководитель отдела «Новая история»
Музей истории города Еревана
harutyunyansussana@gmail.com

ТЕМА ГЕРОИЧЕСКОЙ ОБОРОНЫ ЕРЕВАНА 1724 Г. В ЭКСПОЗИЦИИ МУЗЕЯ ИСТОРИИ ГОРОДА

Ключевые слова: Ереван, Карби, поход, Дзорагюх, оборона, музей, макет

Героическая оборона Еревана 1724 г. один из труднейших периодов в истории нашего народа – время, когда необходимо было полагаться на свои малочисленные силы и возможности. Роковое сражение, при котором ереванцы впервые противостояли в десятки раз превосходящему их по силе противнику, дает нам право называть его героическим. Этот эпизод истории нашел свое достойное место в экспозиции Музея истории города Еревана. Как известно посетителей в музеях больше привлекают подлинники, но как быть в случае, когда интересующая нас тема 300 летней давности и ни одного подлинного экспоната не сохранилось. Обычно в музеях для демонстрации определенной темы используют как подлинные, так и вспомогательные предметы. В экспозиции современных музеев успешно применяется иллюстративно-тематический метод, создающий музейную иллюстрацию отражаемых событий. Так, тема героической обороны Еревана 1724 г. воспроизведена профессиональной группой художников-оформителей во главе с архитектором Альбертом Сохикяном. На панораме изображены портреты командиров боевых отрядов возглавлявших оборону города. А после того как непосредственно под панорамой, в центре зала был установлен макет старого Еревана, стало возможным во время экскурсий наглядно представлять ход событий происходящих в городе, а также понять историческое значение обороны 1724 г. в формировании гражданской позиции ереванца.